Պուրեղէ աւան կամ քաղաքագիւղ յայնկոյս Ալազան գետոյն՝ առ ստորոտով մեծի լերինն. ջրաշատ տեղի բայց և երկիւղաշատ. իւրաքանչիւր տուն գրեթէ առանձինն ամրոց իմն է, ուստի յամենայն գիշերի չպակասին արհաւիրք և աղաղակք. տունք հայոց 35, իսկ Վրաց մինչև ց700. հայք վաճառականք են և այգետէարք, ուստի և ձիւք. գտանին երկու հին բերդք, ունին զմի նոր եկեղեցի աղիւսակերտ. յարևմտեան կողմանէ աւանին առ ձորովն՝ որ հանէ դէպ 'ի լեառն՝ է բնակութիւնն արքունական զօրաց՝ որ պահպանեն զսահմանագլուխս և զանցս ճանապարհաց:

Ծինանդալ՝ գիւղ ինչ յարևելս կոյս առ հիւսիսիւ, փոքր ինչ հեռի 'ի Թէլաւայ. տունք հայոց 12, այլք հողագործք և գռեհիկք:

Կօնդոլէ գիւղ ինչ յարևելս Թէլաւայ՝ ոչ յոյժ հեռի 'ի նմանէ. տունք հայոց սակաւք են յոյժ, այլք բիրտք և հողագործք:

Ուրիէթուբան՝ գիւղ Վրաց 'ի վերայ լայնածաւալ գետոյ, հեռի 'ի Թէլաւայ քսան և հինգ մղոնաւ դէպ յարևելս նորա. տունք հայոց մինչև 65, այլք հողագործք և ստրուկք. ունին զմի փայտեայ անշուք եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ. 1. Ի բաց թողեալ քանի մի մանր գիւղօրայք, որոց բնակիչք ընդ յիշեալ գիւղս՝ հովուին 'ի ծխական քահանայից նոցա, մանաւանդ առ սակաւութեանն չունին զառանձին եկեղեցի:

2. Առ հասարակ ամենայն վերոյիշեալ գիւղօրայք են այգաւէտ, և բնակիչքն ստրուկք հողագործք և այգեպանք:

3. Գիւղօրայք յայնկոյս Ալազանայ՝ անուանի են պտղաւէտութեամբն. նա մանաւանդ մշակութիւն չերամոյ յոյժ գերազանց՝ քան զմիւս գիւղօրայս յայսկոյս Ալազանայ:

4. Ըստ իմ կարծեաց և ուղիղ մակաբերութեան, առիթ բնակութեան յայնկոյս Ալազանայ ոչ այլ ինչ է՝ յայնպիսի երկիւղալի տեղիս, եթէ ոչ ամենայնիւ արգաւանդ պտղաբերութիւն տեղւոյն:

5. Ի մերոյնոց յայսմ գաւառի՝ յոյժ պակաս են հայախօսք, բայց փոքր ինչ աւելի քան զբնակիչս Քարթլոյ և Իմերէթի:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Զ.

Աննիւթական բերքեր[1].

ՄԵՆՔ բաց 'ի նիւթական բերքերէն, նաև մտաւոր կամ աննիւթ բաներու ալ պիտոյք ունինք. և աս բաները, որ քաղաքական տնտեսութեան մէջ աննիւթական բերքեր կը կոչուին, նիւթական բերքերուն պէս արժէք ունին: — Բժիշկ մը կաթուածէ զարնուած մարդէն շատ մը արիւն հանելով՝ զմարդը կը խալըսէ մահուանէ, ուստի իրեն ծառայութեան վարձքն ալ կ'առնէ. որ է ըսել օգտակարութեան արժէքը. բայց աս օգտակարութիւնը՝ որ կաթուածեալին անցաւ, բնաւ նիւթական բանի մը վրայ կեցած չէ. ինչպէս է զգեստի մը վրայ, ուտելիքի մը վրայ կեցած օգտակարութիւնը: Թատրոնի մը մէջ նուագարանները կը զարնեն, դերասանները կը խաղան ուրիշի զուարճութիւն պատճառելու համար. բայց ով որ կ'ուզէ հաղորդ ըլլալ նոյն ուրախութեան՝ պէտք է որ անոր համեմատ վարձք մը տայ, այսինքն զուարճութիւնը գնէ. աստ յայտնի է թէ նոյն զուարճութիւնը օգտակարութիւն մը ունի, բայց անանկ օգտակարութիւն մը որ և ոչ մէկ վայրկեան մը նիւթական բանի մը վրայ կը կենայ, հապա իր օգուտը ցուցընել ու մէկ դիէն լըմըննալը մէկ կ'ըլլայ: Թէ որ մէկուն երգելը ես լսած չըլլամ, կրնա՞մ համ առած ըլլալ անոր երգելէն. նիւթական բանի մը վրայ կեցած չէ որ նայիմ ու համը առնեմ. ուստի թէ որ ուզենամ ես ալ համ առնել, պէտք է որ նոյն աննիւթական բերքը նորէն հաստատուի, պէտք է որ երգիչը նորէն սկսի իր երգը:

1 Գղ. Produits immatériels.

Աննիւթական բերքերուն ճարտարարուեստական բերքեր ըլլալուն “Տարակոյս չկայ, կ'ըսէ Սէ. և ան ճարտարութեան մէջ, ուսկից առաջ կու գան (աննիւթական բերքերը), կը տեսնենք մի և նոյն գործողութիւնները՝ որ նիւթական բերքեր հանելու համար հարկաւոր կ'ըլլան, և զանազան գիտութի̃ներ անոնց հիմունք են„։ Այս հեղինակը ցուցընելու համար թէ աննիւթական բերքերուն որչափ պէտք ունինք, և որչափ բանի կը գործածուին, զանազան օրինակներ մէջ կը բերէ. ինչպէս են զինուորները, որ հասարակաց անդորրութեանը համար հսկելու կու գան. դատաւորները՝ որ արդարութիւնը կը հաստատեն, պաշտօնատէրները՝ որ ժողովրդեան ո՛ և իցէ գործոցը վրայ մտածելու և զանոնք կարգի դնելու համար են, կրօնքի պաշտօնեաները՝ որ բարեկարգ կենցաղավարութիւն սորվեցընելու և խեղճերը մխիթարելու համար են։ Աս զանազան անձանց օգտակարութեան փոխարէնը ժողովրդեան տուած տուրքէն կ'ըլլայ։ Կան նաև ուրիշ անձինք որոնք մեզի առանձնական օգուտ մը կ'ընեն, կամ բաներնիս առաջ կը տանին. և ասոնք իրենց վարձքը անոնցմէ միայն կ'առնեն, որոնց որ օգուտնին կը դպչի. ինչպէս են բժիշկները, որ հիւանդին օգնութիւն կ'ընեն զանազան միջոցներով, փաստաբանները, որ մեզի խորհրդական կ'ըլլան, կամ մեր դատը առաջ կը տանին. և իրենց վարձքը չէ թէ հասարակաց տուրքէն, հապա իրենց կարօտ եղողներէն կ'առնեն։ Նմանապէս ժողովրդեան զուարճութեանը համար աշխատող ո՛ և իցէ անձինք ալ, ինչպէս են երաժիշտք, երգիչք, թատրերգակք, և այլն, տեսակ մը բերք կը հատեն աննիւթական, որուն շատ անգամ կարօտ կ'ըլլանք մեր վիշտերը թեթևցընելու, մարմինը հանգչեցընելու, միտքը արթընցընելու համար, և այլն։ Աս բաներուս մէջէն ալ զուարճութե̃ր փոխարէն վարձք հատուցանողները առանձնականք են. այսինքն որոնք որ հաղորդ եղեր են անոր։

Երկիրները և ուրիշ ստացուածքներն ալ որ աւելի նիւթական բերք հատելու կու գան, երբեմն աննիւթական բերք ալ կու տան. ինչպէս են բոլոր զուարճութեան համար շինուած պարտէզները, որոնց մէջէն ոչ պտուղ և ոչ ուրիշ ծախու բան կ'ելլէ, և անոնց բերքը միայն հոն գացողներուն կամ իրենց տէրերուն տուած զուարճութիւննին է. և երկրորդ տարին նոյն պարտէզներէն ստացուելու զուարճութիւնները անոնց նոր բերքը կը սեպուի. աս զուարճութեանց օգտակարութի̃ ունենալը անկից յայտնի է, որ շատ մարդիկ վարձքով կը բռնեն անանկ պարտէզներ։ Նաև տուն մը, որ կրնայ նիւթական շահ մը բերել, աննիւթական բերք բերած կ'ըլլայ՝ թէ որ տէրը մէջը բնակի. վասն զի ան զուարճութիւնն որ կը զգայ տէրը իր տանը մէջ բնակելով՝ չի ծախուիր նիւթական բան չըլլալուն համար. սակայն բերք ալ է, որովհետև թէ որ ուզենար՝ կրնար տունը վարձքի տալ. “Աս զուարճութիւնը էական աժէք մը ունենալով, և նիւթական բերքի մը հետ միացած չըլլալով, աննիւթական բերք մըն է„, կ'ըսէ Սէ։

Ինչպէս նիւթական բերքերուն, անանկ ալ աննիւթական բերքերուն տեսակն ու գործածութիւնը կը շատնայ, թէ որ անոնց վերաբերեալ գիտութիւնները և արուեստները ծաղկին. որով մարդկային ընկերութեան հանգստութեանը և երջանկութեանը միջոցներն ալ կ'աւելնան։